


վարժեալ ի համալասարան (sic!) ս՝ թօմի ի մեծն հ՝ ոմյ, որ այժմ  
է մեծն ի հ՝ ոմ, ֆ՝ թաղղասար նոյն զեղջէն կէծկոյ, նորըն-  
ձայ, որ այժմէ ի միասին գրիգոր վր՝ դաին, ֆ՝ ը անդ՝ ըս նոյն  
զեղջէն:

Արդ անուանք վրդ՝ պտց ք՝ հից և կ՝ բգւորաց, թ՝ վ մրդ՝ ղու՝ ե  
տ՝ ն, ո՝ ո՝ հ՝ զ, յ՝ նվրի ժ՝ դ ի ժ՝ մկս ծայրագոյն և սրբ՝ զն հայ-  
ր՝ պտի տ՝ ն կլէմէնդոս, ժ՝, ե՝ րդի, և ի ընդհանրկն ջէնարալ  
կ՝ րդին ս՝ թ դօմինկ՝ սի, տ՝ ն թօմաս րեկօրեոթի, և վիճակիս ն՝ խի-  
ջեանոյ, արհիե՝ պտ տ՝ ն մաթէոս յովանիս՝ ցի, ի գիւղաք՝ ղքէն  
ար՝ բնէրոյ, այսուհետեւ ալատուիրեմ ա՝ մ կր՝ գւրց, որ գան ի կրգի  
ս՝ թ դօմինկ՝ սի, շարդ՝ րացեն ի պ՝ տմագրումս ե՝ կլքն առ ք՝ ս,  
այսքան բաւեցի:

Ա. Յովհաննիսեան.



## ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՄԻ ԵՒ ՇՐՋԱԿԱԹՔԻ

### Հայերէն ձեռագրերը

(Համառօտ նկարագրութիւն եւ յիշատակարաններ)

Շարունակութիւն \*)

417ա. Փառք և աւրհնութե՝ դովութիւն բարեբանութե՝ եր-  
կրպագութե՝ և փառաբանութե՝ և մեծ գոհութե՝ ի բոլոր սրտէ  
և ի բաւանդակ մտաց և յանձնէ և յամենայն զաւրութենէ մերմէ  
ս՝ բ երրորդութեանն հաւը և որդոյ և ամենազաւը ս՝ բ հոգւոյն  
այժմ և միշտ և յաւ՝. Ք՝ թ՝ մարդեղութե՝ ն խաչելութե՝ և  
ս՝ բ յարութե՝ ն փառք և աւրհնութե՝ յամենայն արարածոց և յամե-  
նայն ազգաց ազանց և ի ս՝ բ լեզուաց աւկտակարաց թարգմանչաց  
յերկնաւորաց և յերկրաւորաց, յիմանալեաց և ի սգալեաց, ի զաւրաց  
հրեշտակաց և ի սրբոց ճգնաւորաց և յամենայն ս՝ բ եկեղեցեաց  
աւրհնեալ և փառաւորեալ խաչելեալ տ՝ րդ։ Աւրհնեալ միածին  
որդիտ Աւրհնեալ բարձրեալ հաւը որդիտ Աւրհնեալ բարեբար տ՝ րդ։  
Աւրհնեալ բարէգութ տ՝ րդ։ Աւրհնեալ երկայնամիտ տ՝ րդ։ Աւրհնեալ  
կատարիչ խնդրուածոց տ՝ րդ։ Աւրհնեալ անբաւ մարդասիրութիւնդ  
տ՝ բ թագաւոր։ Աւրհնեալ շնորհատու բարեաց տ՝ բ թագաւոր։ Աւրհ-  
նեալ ա՝ ծային ծնունդտ որդի ա՝ յ կենդանոյ։ Աւրհնեալ ա՝ ծային

\*) Տես «Արարատ» 1944, դեկտ.:

մարդեղութիւն քո թագաւոր: Աւրհնեալ ածային խաչելութիւն փրկիչ թագաւոր: Աւրհնեալ ածային թաղումն կենդանարար տեր: Աւրհնեալ ածային յարութիւն կենսատու բաշխող շնորհաց և ողորմութեանց: Աւրհնեալ ածային համբարձումդ և նստեալդ յաւ թոռ շնորհաց: Աւրհնեալ ածային գալուստդ ի գատատան արդար դատաւորութեանն: Աւրհնեալ աւրհնեալ և դարձեալ աւրհնեալ ամենագութ և ողորմած տեր. քանզի ով ոք բաւէ աւրհնել զամէն նաւրհնեալ անուն քո սեր. և ով ոք բաւէ պատմել զմարդասիրութիւնդ քո և ով կարէ յայտնել զողորմութիւնդ քո տեր, և կամ ով կարէ թուել զանթիւ շնորհդ քո առ քո հաւտացեալս, զի բազմապատիկ է խնամ ողորմութիւնդ\*\*) քո առ ազգօ մարդկան: զի դու միայն ես վասն մարդոյ և մարդասէր, և մարդ միայն է վասն փառացն աշը: զի աւրհնեալ է փառք քո տեր ի տեղոջ սրբութե, և փառք քո փառաւորեալ փառաց թագաւոր: զի անպատում է փառք մարդոյ ի փառաց քոց տեր, և լոյս գերազանց ի լոյս երեսաց քոց տեր. զի պատկերակից քեզ արարեր զնա, և զու առեր մարմին և եղեր մարդ նման նմա, և զործակից քեզ արարեր զնա անուանազրութե՝ ամենայն կենդանեաց, և փառաց քոց տեսողս արարեր զսեր վկայսն բանալ երկնից և տեսանել զորդիտ ընդ աջմէ հաւր: և յափշտակել մինչեւ յերրորդ յերկինս և լսել բանս անճառս ի փառաց քոց. և արարեր զմարդն տեսող փառաց քո: Հայր կամիմ զի ուր ես իցեմ և սոքա ընդ իս իցեն զի տեսանիցեն զփառսն իմ: Ո՞վ անպատում փառք մարդոյ զոր ի քումմէ բարերարութէնէդ ընկալաւ, և գերահրաշ ի քէն պատուեցաւ և լուսազարդեցաւ ի լոյս երեսաց քոց, և զովեցան զասք սրբոցն և պսակեցան յանմատոյց լուսոյ քո: Եւ հոգով շնորհաց քոց լցան մարդարէքն, և առաքեալքն, և բխեցին զբանս աւրհնութիւն ի սէր սրբութե՝ քո: Մարդարէքն մարդարէցան զայս պանծալի ծաղիկս որ ի սմա ամբարեալ կայ, և առաքեալքն ընկալան զհոսանս շնորհաց յերկնային ծովէդ և արբուցին սովաւ զազգս մարդկան: և հայրապետքն և սեր մարտիրոս նահատակէքն լուան զայս զիր աւրհնութեն և վասն քո մեռան, և սովաւ ի քէն աւրհնեցան և սովաւ երանեցան. երանի որ լսէ զբանս աշը և պահէ և առնէ զնոսաւ: զի զիրք կենդանի են և կենդանի առնեն զսիրողս իւր: Քանզի սովաւ հաւատացաք յարարիչն յարարածոց ի սեր երրորդութեն ի հայր և յորդի և ի սեր հոգի: Եւ սովաւ տեսաք զարարիչն արարածոց զտերն ամենեցուն վասն մեր խաչեալ և դարձեալ յարուցեալ: Սա թագ թագաւորաց և սայ պսակ եկեղեցեաց: Սա զանձ անկողոսկ-

\*\*) Այս եւ ուրիշ տեղերում յատկացուցիք փոխանակ սեռականի դրուած է ուղղական:

տեղի և փարթամութիւն անթարդմանելի: Սա հարուստ դարուց, որ ի դարս և ի ժամանակս պատմի: Սա արծաթ ընտիր որ ոչ փորձի: Սա ոսկի գովիլի, որ ընտրելոցն է գտանելի: Սա համեղ ճաշակ և որք ճաշակեն քաղցրանան: Սա հայ քաղցելոց և որք ուտեն գոհութեամբ դամ աւրհնեն: Սա ջուր ծարաւելոց, և որք ըմպեն արքենան սիրով աշոյ: Սա գետ յորդառատ որ արքուցանէ զոլորտս արիզերաց: Սա խունի անուշանոտ հաւատացելոցն հոտ անոյշ ի կիանոն յաւիտենից: Եւ անհաւատիցն հոտ ի մահուանէ ի մահ: Սա ճրագ ճշմարտութիւն որ լոյս տայ այսոցիկ որ ի քայլ իցն: Սա պսակ կաթուղիկէ եկեղեցոյ, որ զիեսայն գովի ի սենեակ սրբութիւն իւր: Սա մանկանց առագաստի ո՞ր սիօնի մանկանց եկեղեցոյ դաստիարակ սրբութիւն, որ սնուցանէ սրբութիւն և հասուցանէ ի քայլ: զոր առէ եթէ անխարդախ կաթինն փափագեցէք զի սովաւ աճիցէք ի քրիութիւն:

Գերահրաշ է գիրքս այս ի քրիութիւն հաւատացելոց:

Արդ կատարեցաւ և աւարտեցաւ քսանիմն և առաքելախաւս մարգարէաշէն հոգիարուիս ածագարդ և երկնային շնորհ կտակ տառիս. Այս հոգենոր, փառաւոր, դիմաւոր, անծնաւոր, երկնաւոր, խորան լուսաւոր, խնկաւոր և խորհրդաւոր, բարձրացիր սովաւ սիօն հոգենոր, և զու փառաւոր իմ մայր լուսաւոր, ընկալ զիս ի ծոց քո հարսնդ երկնաւոր, բարձրացոյ զիս ի սեղան քո հոգենոր, դասաւորեալ զիս ընդ փետայն երկնաւոր: Քարոզնան սովաւ զարքառութիւն աւետաւոր, և զքայլ ո՞ր յս զոյսն մեր թագաւոր:

Սա և սովաւ գեղեցիկ սայթագ... ծովածին մարգարտաց Ծիրանագոյն ծաղկանց, երփներքն զերագոյն գունաց. կտաւ վարշամակաց ի գլուխս եկեղեցեաց: առատագոյն բուրաստանաց և հոտ բուրումն կնդրկաց խնկոց: Ընդ որս և ժողովեալ, կուտեալ, զիզեալ, բարդեալ, տստակեալ և ի մուսնջ մի կապեալ: Որով բարգաւաճեալ բարեբանեալ, զարգարեալ տաւնք ո՞րունականք, և վերածայնին ամենայն սրբոց զասքն, տաւնախմբելով պատուելով պատմեն զյիշատակս նոցա, և զանուանս նոցա յիշեն և յիշատակեն ի փառս ո՞ր երբորդութիւն:

Նախահարցն, մարգարէիցն, առաքելոցն, հայրապետացն, համարէն մարտիրոսացն, և սք կուսանացն, և երջանիկ ճղնաւորացն, և հրաշագարդ վարդապետացն. հրեշտակաց և հրեշտակապետաց երգեն սովաւ զյիշատակս սոցայ: Զորս և լի և անթերի և յաւելուածով ունի յինքեան զիին և զնոր կտակարանս ի փառս ո՞ր երբորդութիւն և յաւրհնութիւն հաւատացելոց, և ի յուսումն մանկանց սք սիօնի, ի յուրախութիւն նոցա սրտի և ի զեղմն իմանալի:

Գրեցաւ ձեռամբ յիմար և փցուն զրչի Սարգսի և ունայն

կրաւնաւորի, և յալիս տառանեալ նաւարեկի, և ոչ ապաւինեալ ի նաւապետն յ՝ ս բարի, այլ ի կենցաղս ի յայս տեսի, և ի հանդէս սորա սիրոյ ջանացի, և զորքան սորա երբեք ոչ գտի, և զաւանդ արձաթն զոր ետ ինձ տ՝ ը ի սմա իսկ կորուսի, այլ զարթուցիալ ի չարեցս զոր իսկ տեսի, այլ բեկեալ սրտիւ և յոգնախումբ հոգով զյոյս դարձեալ առ տ՝ ըդ իմ եղի, պազատիմ առ փրկիչդ և տ՝ ն իմո յ՝ ի, ողորմեա ինձ բազմամեղի անուն սարգսի, վասն ծնողի քո և միշտ կուսի, և կենսատու խաչի քո պատուականի, և հեղմամբ արեան քո ահեղի, և վասն ամենայն սրբոցն երկնաւորի և երկրի, ողորմեա ինձ սարգիս զրչի, և թող զմեղս իմ որ ի մարմնի, վասն անուան քում մեծի, և իմ ծնողացն և իմ ննջեցելոցն ամենայնի, և իմ տ՝ ը յ՝ քեզ փառք յամենայնի: Ի թուականութիւն հայոց: Զջթ: Ի վասն աջաւնից: ընդ հովանեաւ ո՝ ը խորանիս քաջ և յաղթող ո՝ ը գէորգեա: Ի յառաջնորդութիւն ո՝ ը ուխտիս կիրակոսի և սիմէռնի, երջանիկ և ո՝ ը կրաւնաւորաց, որ են սոքայ բարիք ի բարերարէն բարէգործեալք, առատատուրս առ հեղս\*) և աղքատս, և մատակարարք հաւասարատեսք և տեսողք շնորհացն յ՝ ի, որ և մարմնաւոր բան ի մէնջ ոչ պահանջեցին, քանզի և աւրհնեալք լիցին սոքա կիրակոս և սիմէռն և ծնողք սոցա ընդ սոսա. զոր ոչ բաժանին ի միմեանց, այլ սիրով հոգոյն միացեալ ընդ միմեանս:

Ի հայրապետութե՞ն տ՝ ն ստեփաննոսի, որ է սա բարի, որ և ազատեաց զազգս քահանայից ի հարկէ հարաճեաց, և նոյն ինքն տեսանէ զազատութիւն իւր:

Ի թագաւորութե՞ն զոր ոչ գոյ. Այլ բարձեալ է թագաւորութիւն քանզի իշխանոք են խոռովարաբք և տատանեալք ի վերամիմեանց ազմկեաւլք, զոր ոչ կարէ բերան պատմել զոր յայսմ ամի տեսին աչք մեր զաղէտ տարակուսանաց ի հեծելեաց. զորս էրէսուն հազար մարդարէմ զազանաց ի վերայ երկրիս մերում յարձակեալք, զնետս սրեալ և զաղեղն լարեալ և զթիւրս իւրեանց թափեալ յարեան ի վերա երկրիս մերում, և ով կարէ պատմել զանաւրէնութիւնս նոցա զոր արարին և գործեցին. քանզի բազում գաւառս գերեցին և աւերելով կործանեցին, և զինչս արդիւնաց զամենայնն յափշտակեցին և զամէնեսեան զքրիստոնեայք կողոպուտ արարին մերկ և ըոկ և ոչ թողին ոչ մի ինչ ի վերա անձանց քրիստոնէից, այլ զանասունս տաւարաց, ջոկս ջոկս առեալ տարան, զոշխարաց և զեղանց, զկովուց և զցլուց, զիշուց և զերիվարաց, զհանդերձս ի յանձնէ մերկացուցին և մերկս արարին ի տեսիլս խայտառակաց, քանզի որ աչք բաւէր տեսանել զա-

\*) Տպազրական սխալ չկարծել. հեղս եւ ոչ հեզս.

դիոզորմ տարակուսանաց, և կամ որ անձն բաւէր տեսանել և տանել այնմ չարչարանաց, որ յերէկ տան տունուտէր և ամենայն իրաւք լի, և այսաւը բեկեալ սրտիւ և տրտմեալ և ... (ի) մերկ ի վերա մոխրոյ նստեալ: Քանզի այնպէս լի էր երկիրս ամենայն բարութեր, և յանկարծակի այնպէս արարին, որ շունք ի սովոյ սատակէին: Քանզի զլորս ամբարաց հացից հանէին: Եւ այնպէս բարկութեր և սրտմտութեր ի վերա բոլոր երկրիս արձակեցան, որ և հարիւը անձն սրով խոհխոհեալ նահատակեցան: Որ և ծաղկողի սորա մայրն նետով խոհխոհեալ փոխեցաւ ի քա, զոր և համարեսցի տեր և պսակեսցի ընդ արհամբ մարտիրոսացն: Կար...մ եզրարք եթէ դեք ող...ն (ոզորմին) մարդկան, այլ և նոքա քանզի արիւն ահեղք արիւնաբրուք էին գաղանք վայրենիք, աւերիչք և ապականիչք, քանզի իշխանք էին չարք և չար իշխանն խաւարի սրով հոգո... սատակի: Արդ տեր զինչ լինիցիմք ի մէջ ուրացուդաց և ի ձեռաց այլազգեաց: միթէ կատարեցաւ բան մարգարէութեանն մեծին կոստանդիանոսի որ ետես ի տեսլեանն եթէ յետ բազում ժամանակաց յարիցեն այլազգիք և գերեսցեն զտունս տրդատա, և վայ և եղուկ յայնմ ժամանակի, որ եղել իսկ յայսմ ամի առաւել վայ և եղուկ. զի յետին աղքատութեր մատնեցաւ ազգս հայոց. զի աստցեր եթէ յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք, և եթէ բազում նեղութիւնք են արդարոց, և եթէ նեղութեց համբերեցէք: Արդ առաւել նեղեցաք յայլազգեաց և քան զկարն մեր առաւել վշտացաք զոր ոչ կարեմք համբերիլ և տանել մինչև անյոյս լինել մեզ և ի կենացս յայսցանէ և ասել, երանի մեռելոցն որ ոչ են մատնել ի ձեռս այլազգաց և ազտահն նոքա յայսմ տանջանաց: Մինչև յերբ տեր մոռանաս զմեզ իսպառ. Մինչև յերբ աղաղակեմք և ոչ լուիցես ձայնի հառաջանաց մերոց. մինչև յերբ տեր մոռանաս զձայն պաշտաւնից քոց, և ամբարտաւանք զզուեացին զմեզ: Մինչև յերբ բարկանաս տեր, մինչև յերբ դարձուցանես զերեսս քո ի մէնջ, մինչև յերբ մոռանաս զալքատութիւն և զնեղութիւն մեր յորում կամք. այլ թէպէտ և մեք մեղաք և անաւրինեցաք և ոչ արարաք զկամս քո, սակայն անուն քո կոչեցեալ է ի վերա մեր, և արեամբ քո զնեալ եղեաք. մի մեզ տեր մի մեզ և մի վասն մեղաց մերոց առնել մեզ: Այլ վասն մեծի անուան քո և ահեղ արեան քո որ վասն մեր հեղեր և զմեզ յանիծից բարկութենէն գնեցեր. լուր աղաչանաց մերոց և աւզնեա մեզ ի նեղութեա մերում: Եւ արդ տեր նուաղեցաք մեք քան զամենայն ազգս և եմք ըմբռնել ի ձեռս տյլազգեաց վասն մեղաց մերոն: Եւ արդ տեր մի լոեր և մի դազարեր, այլ զարթոյ զզաւրութիւնդ քո և եկ ի կցուցանել զմեզ: Լուր մեզ վասն հարցն սրբոց և բարեխաւսութիւն և աղաւթիւք սոցա աւգնեա մեզ և փրկեա զմեզ ի վշտաց

և ի՞ նեղութե՞ց և ի՞ նեղչաց մերոց ապրեցոյ զմել բարերար տե՛ր, և ողորմեա ամենայն անձանց քրիստոնէից և խաղաղացոյ գիեանու մեր ի՞ վերա երկրի, և զյարուցեալսն ի վերա մեր կործանեա և յետս յետս խորտակիա, և զեկեղեցի քո յիշեա և հաստատեա և զժողովուրդս քո աւրհնեա և հովեա և պահեա յայսմհետէ մինչև յաւիտեան, և ամրացոյ զյուսացեալքս ի քեզ հաստատեա, և աշխարհի խաղաղութի՞ շնորհեա, և զդառնութի՞ մեր ի քաղցրութի՞ փոխեա և զխաւարեալքս ի լոյս փոխարկեան Եւ զաղաշանս մեր ընկալ և զընկերակիցս մեր աւրհնեա որ եմք ի մի ուխտի վանաց որք սիրով հոգւոյն յիշատակեմք ի գիրս կենաց, զկիրակոս զբարի և զլաւ զխոնարհ և զհեղ առաջնորդս մեր, և զսիմէոն քարի և ընկերասէք սրբապահ կրաւնաւոր, համբերող և ճգնող առատ ի տուրս աղքտաց, զոր տե՛ր ա՞ծ տացէ սոցակ ծնողաց և եղբարց զկեանսն երանական Զխաչիկ և զվարդան որ ձայնիւ հնչման զովեն զորդին ա՞յս Զյակոր խոնարհ և զյուվանէս ժրաջանն Զաւետիս աւետեառք լցեալ Զկիրակ զսպասաւոր եկեղեցւոյս մերոյ: Զպետրոս և . . . . . աւեծեալ ի քահ . . . . . որդիս մեր վ . . . . .

այ եղբայր ըս . . . . . հայածանաց  
մեկնեալ ի սո . . . . . տար աշխարհ . . . . .  
արութի՞ փո . . . . . եմք թէ որպէ . . . . .  
աւգնեատ նմ. և . . . . . և կամ որպէ . . . . .  
աւորս վանի . . . . . յաւտարութ . . . . .  
որ, զարրահ . . . . . փոքրիկ յուլս  
ստող մշակ . . . . . և ն հրայրեաց  
տնտե . . . . . առաջի կացեալ ման . . . . .  
զէմ սոքա ամենեքեան . . . . . ակք աւրհնեալք  
յա՞յ . . . . .

Եւ զիմս ասացից և յիշա . . . . . եցից զեղկելի դրիչ սար . . . . . զանառակ վարս և զծո . . . . . եալ կեանս, զհեղզս  
և զթշուառս ի յա . . . . . և զհպարտս ի լերի . . . . .  
Զկամակորս ի իս . . . . . և զհպարտս ի լերի . . . . .  
Զյափշեալս և զկուը . . . . . եալ և զարձեալ  
ծովս ծփանաց: զ . . . . . Զբարին առեալ . . . . .  
ըն բարկացուցեալ . . . . . եալ և զարձեալ  
և զարձեալ ի տ . . . . . ալեալ, նորոգեալ

գերէղարձ . . . . . հալ  
 ի գերութիւն . . . . . ոսկին առեալ . . . . .  
 զբանս . . . . . և վաճառ . . . . .  
 ի նա տալ զ՞ր . . . . . այդիս  
 տե . . . . . զինչ լին . . . . .  
 պատ . . . . . ս, տար . . . . .  
 սը սարդիս . . . . . ոք կայ  
 ի հոդ . . . . . աւաղեալ . . . . .  
 ունկն . . . . . նացս  
 ի ջը . . . . . բեալ ի մէջ . . . . .  
 նուաղես . . . . .  
 նին: Ես ինքնին . . . . .  
 լոյս որ ի խաւարի . . . . . գու լոյս ես և զիսա . . . . .  
 լուսաւորես: . . . . . ս գիտեմ տ՞ր որ ի ճ . . . . .  
 ս մոլորութեան կամք . . . . . որ  
 դարձուցիչ ես . . . . . Ես ինքնին գիտեմ . . . . .  
 ութիւն կամք . . . . . իս գերելոց . . . . .  
 ոց մերոց . . . . . ի լոյս քո  
 ան . . . . . ինձ որ կա . . . . .  
 ա՞ր և պաղ . . . . .  
 փառաց աթ . . . . . կն ունիմք . . . . .  
 թէկ ոչ բար-  
 կութե՞ւ: մեք ակն ունիմք ի քէն տ՞ր ողորմութիւն և ոչ խոռվու-  
 թիւն: Մեք ակն ունիմք ի քէն տ՞ր քաղցրութիւն և ոչ դառնութիւն:  
 Մեք ակն ունիմք ի քէն տ՞ր անոխակալութիւն և ոչ ցասումն  
 սրտմտութիւն: Մեք ակն ունիմք ի քէն տ՞ր լուսոյ փառաց ար-  
 քառութիւն և ոչ խաւարումն դժոխոց: Մեք ակն ունիմք ի քէն տ՞ր  
 փրկութիւն փառաց երկայնամտութիւն և համբերութիւն ի վերա  
 անձանց մերոց: դարձ առ մեղ ա՞ծ փրկիչ մեր, և դարձոյ զսրո-  
 մտութիւնս քո ի մէնջ: Մի յաւիտեան բարկանար մեղ տ՞ր, այլ  
 քաղցրութե՞ր քո խնայեա ի մեղ. ա՞ծ գու դարձեալ կեցուցես  
 զմեղ. և ժողովուրդ քո ուրախ եղիցին ի փրկութիւն քում: քաւեա  
 զմեղս անձանց մերոց և լուսաւորեա զնոգիս մեր. և քեզ փառք  
 յամենայնի ամէն,

Սրդ սիրելիք հարք և եղբարք լուսերամ դասուց ազգընտիր  
 և քահանայութիւն ժողովուրդ սեփհական, մանկունք սիոնի մ՞ր  
 եկեղեցոյ, զդէմս ի յերկիք եղեալ պաղատիմ առաջի ձեր ամէնե-  
 ցուն որք հանդիպիք սմայ այսմ ընթերցուածոյ ս՞ր զրոցս և  
 ա՞ծային կտակիս յիշել արժանի արարէք զմեղ զսարդիս գրիչ որ  
 բաղում անդամ աշխատեցա ի սմայ, և զերկուս ամս պահեցի զսայ  
 տ . . . . . հ . . . . .

<i>թ</i>	<i>թ</i>
<i>b</i>	<i>b</i>
<i>աւք</i>	<i>է իս</i>
<i>ետացն</i>	
<i>թե ժառ</i>	<i>մարմնոյ</i>
<i>և կամք և</i>	
<i>ղէմ ողորմ</i>	<i>հեաց</i>
<i>բարէ</i>	<i>աւթք ի վերա</i>
<i>յոյժ տըսում</i>	
<i>որաց աւերու</i>	
<i>վանորայք ա</i>	<i>եղեցիք քակեց</i>
<i>անայք ի գեաւզս</i>	
<i>ցրուեցան, և կը</i>	<i>որք ի մէջ</i>
<i>կանանց ըն</i>	<i>ան, և եկեղեցական կա</i>
<i>ոշեցան, և քրիստոնէ</i>	<i>ուրախութիւնսիանե</i>
<i>և ամենայն ուրեք ոչ գտաւ հանգիստ</i>	
<i>քանզի տատանեալ կան քրիստոնէ</i>	<i>Այլ տուր յա աւզնեալ</i>
<i>քրիս</i>	

Ծան. Զեռազրիս վերջին երկու թերթերը վնասուած լինելով՝ պահապահ բառերի տեղ կէտեր դրինք:

U. S. U.

420β. . . . . եկեղեցոյն է յիշակ ամէն և եղիցի:  
· · · նչև յաւիտեանս յաւիտենից:

32.

808.

Թղթ, բլրգ. թւկ. զրչթ. ՌՃՁԱ. (=1662). տեղի զրթ. «ի յերկիրս Որոտան. ի զեղն. որ կոչի. լոր, և մըուց». զրիչք՝ Ղուկաս երէց և Սըրահամ դպիր. վերջից մի քանի թերթ պակաս:

## Յիշատակարան.

481բ. Գրեցաւ Մ'-ը ճաշոցս Զեռամբ անարժան քարտուղարացս. Ղուկաս իրիցու, և արքահամ դպրի. ի յերկիրս Որոտան. ի գլուխ. որ կոչի. լոր, և մըուց. ի թվին. ԽճժԱ. ամին:

482ր. Փառք ամենասը երրորդութե՞ն և մի՞ածութե՞ն հաւը և որդույ և հոգւոյն սրբոյ: Յերկինս ի վեր և յերկիր ի խոնարհ, յիմանալեացն և զգալիացն և յա՞մ արարածոց այժմ և միշտ և յաւլիտեանս յաւլիտենից տմէն: Որք ի ստորայնոց աւարտին սեռից սակա իմաստնագոյն լինելն քան զծնեալսն ի լուսոյ ըստ տըրունեան հրամանին: Քանզի նախնիքն հաճոյք՝ ամուսնացեալք երկին: Խսկ ոմանք հրեշտակակենցաղ կուսութը ընտրեցան: Այլք փարթամութը բն հասին: և կէսք աղկաղկութը վեհացան: Ոմանք մարդասիրութը ճոխացան. և այլք անտեսութը գերազանց եղեն Բաժինք հեղութը բն յարգեցան: Խսկ այլք՝ քինախնդրութը բն դրուատեցան: Են որ անսուաղութը սերաթենեցան. և են որ չափավայելլովն արժանացան: Եին որ միահաղոյն ցրուելովն յարգեցան: և են որ աւրդաստաւրէ տրաւքն առատացան: Տինա, որք ի բնաւին ընչից կորդեցան: և այլք որք բարւոք տնաւրինիչք եղեն ընչից իւրեանց: Նա և զգէնն է տեսանել: Զի ոմանք կուսանք խոտեցան. և այլք բազումք յամուսնացելոց վատթարացան: Ոմանք մեծատունք զրկեցան, և անթիւք յաղքատաց անգոսնեցան: Արդ՝ որպէս եցոյց աւրինակս, բազմատեսակ է բարւոք աշխարհին ընթանալն. որք անսայթաք լինիցին մատակարարք իմաստնոց երամք, և ընկալեալ ունիցին յինքեանս զհոգւյն վտակս: բազմադիմի բուսուցանեն զբոյն բարի յանդաստանս իւրեանց: Որպէս և է սովորութիւն անխանդացաւզ կամացն ամենաբարի բնութե՞ն ի զարս զարս երեեալ նշանաւք և արուեստիւք հոգւոյն ներգործութը: ո՞պ ընտրեցին և սիրեցին զհրամանն ա՞ծային որ ի պէտս մարդկան ազգի պատմաբանի: Ռւստի և քաջ հոետորն, և ամենազովն անուամք, արքեպիսկոպոսն, և քահանայապեան, գողթն գաւառի, և բարի հովիւ և տեսուչն հօտին քիւ: Խաչատուր Մարունապետն, խորհուրդ բարի եղեալ ի մտի ստանալ գանձ պատուական և անդրժելի յանառիկն սիոն, ուր ոչ զող և ոչ ցեց մերձենալ կարեն: և յիշատակ անջնջելի ազգաց յազգու: և ընտրեցին մտաւք իւրեանց զայս զեղեցկայարմար և խորհրդաւոր զիրս ստանալ, որ ունի բովանդակեալ ի ծոց իւր զրոլոր ամին ընթերցմունսն: Զտաւնից ա՞րունականաց, և զա՞ծահաճից արանց, և զկիրակէից և զպահոց, ըստ, յէկե, աւուրց տարոյն, անմոլար շաւիդ եկեղեցւոյ մանկանց թողեալ, ի հոգէզիր արանց ա՞ծազգաստից որ ի նախնեաց անտի հիմանց եկեղեցւոյ սահմանեցաւ ի փառս քիւ և ի պայծառութիւն որդւոց սիոնի: զի յար ընթերցմամք լուսաւորեսցին միտք մարդկան ի պատուիրանս տե՞ն, որ է լոյս, և լոյս տան աչաց: Արդ որք հանդիպիք ի պատիւ տաւնից տըրունականաց, և կամ հաճոյացեալ արանց, կատարել զյիշատակ նոցա:

Յիշեսջիք առ տըր զվերոգրեալ բարունին խաչատուր, և

զծնօղն իւր զկարապետն, և զսառայն, և եղբարս դաղաճանն: և զվարդանն, և զքոյրն իւր զգօճարն, զհանգուցեալսն ի ք՞ո հանգերձ ա՞մ տոհմիւք և զարմիւք: զի յոյժ փափազմամբ և սիրով ստացաւ զսա յիշատակ իւր և ծնողաց իւրոց, ի վայելս մանկանց եկեղեցւոյ: և եղ զսա ի վանս ազուրիաց՝ որ է աթոռ զողթնեաց, որ յանուն ս՞ր թումայի առաքելոյն կառուցեալ է: ի թ՞ուրութե՞ պարսից աշխարհի երկրորդ շահապասին: և ի հայրապետութեան ս՞ր աթոռոյն էջմիածնայ տ՞ր յակոր կ՞թղկսի որոց տ՞ր ա՞ծ կեանս խաղաղականս պարգևեացէ անվնաս կենցաղափարութ՞ր ի փ՞ոս անուան իւրոյ:

Դ՞րձլ յիշեցէք ի ք՞ո զմիարան ս՞ր ուխտիս, զպետրոս վարդպատճ, զմովմէս վ՞րդպատճն: զտ՞ր սարգիս, և զտ՞ր հայրապետն: զտ՞ր մարկոս, և զտ՞ր մանկասարն: աշակերտք վերոյգրեալ բարունւոյն նաև զյարութի՞, և զգասպար, և զմկըրտիչ միայնակեացսն: զգրիզոր սարկաւագ, զթումայ և զհայրապետ կիսասարկաւագ: զայլ ա՞մ մի եղէն եղբարս ի ք՞ո յիշեցէք: նաև զբաղմամեղ զարբահամ զրիչս աղաչեմ յիշել ի ս՞ր յաղաւթս ձեր, և դուք յիշեալ լիջիք առաջի ահեղ ատենին ք՞ի, որ ա՞նեալ յաւիտ՝ ամէն:

Գրեցաւ ի թուաբերութե՞ս մերում Հայոց Թօ. մետասան, ամի:

### Յ Ա Ռ Ա Ր Ա Ն

(Մեծաղիր, ընդարձակ, հասարակ և յատուկ անուանց, սկզբից պակաս մինչև «Բարաքիայ» բառը. վերջին բառն է «Կօաթայ», որից գէնը պակասում է—հաւանօրէն մի երկրորդ հատորում):

(Թղթ., նօտր. թւկ. գրչութեան, տեղի գրչութեան—անյայտ. թերթք—365). յիշատակարան չունի:

Մ. վարդ. Մահուդեանց.

Եարունակելի

